5573

Учительник

И. Исуилгурский

3kn 19
И-81р

1 DEC 2009

Ս. ԽԱՆՈՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

ИНСТИТУТА
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,—ԵՐԵՎԱՆ. 1927

Зкпіф
Ս-81 խ

Հ
Ս 851
ЗКП19
Ս-81 Խ
1 9 AUG 20

Ս. ԽԱՆՈՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

(ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ԵՐԵՎԱՆ, 1927

11 MAR 2014
5573

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
59962.66

№ 540 Գրատեղիք № 175 (բ) Տիրաժ 2000

Պետբատի առաջին տպարան Վաղարշապատում

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

I. ՀԱՅՐ ՅԵՎ ՎՈՐԴԻ

Անդրկովկասի բանվորական շարժման մեջ, նրա պատմական դրվագներում Սուրենը գրավել է հատուկ ու պատվավոր տեղ, իբր մեկը այն գործիչներից, վորոնք անդադրում ու անընդհատ գործել են վոչ միայն տեսական աշխարհում, այլև խոշորագույն չտեսնված աշխատանք են թափում շարժմանը կյանք ու շունչ տալու վրա։

Կան հեղափոխական գործիչներ, վորոնք իրենց գործունեության պատմա'կան անցյալում, Լենինի սուր բնորոշումով, յեղել են շարժման ուղեկիցները։ Ասել է, նրանք գործել և աշխատել են այն չափով, վոր չափով իրենց անձնականին հարմարվել է հեղափոխական գործը, վորքանով նրանք յենթակա չեն յեղել այս ու այն «անհարմար կացության»։

Ճիշտ է, անցյալը իր անբնական խոչընդոտներով, հալածանքներով հարուստ, պայմաններով անհամբույր, մեծ դժվարությունների, զոհողությունների, շատ անգամ գործելու հնարավորությունից զրկող մի շրջան եր, հաճախ հուսահատության հասցնող, բայց և այնպես նա տալիս եր, առաջադրում անձնուրաց անհատներ, վորոնք արհամարհելով ամեն մի զրկանք, տանում եյին այն խաչը, վոր նրանք կամովին հանձն եյին առել հանուն բանվոր դասակարգի, պրոլետարիատի ազատագրման։

Այդ կամավոր խաչակիրներից եր Սուրեն Սպանդարյանը։ Մի մարդ, վոր դուրս գալով պրոլետարիատին, նրա

կովին ոտար միջավայրից, կարողանում է հաղթահարել շրջապատի թանձր շերտերը և ընկնել հեղափոխության փոթորկալի հորձանուտները։

Ո՞վ էր Սուրենը, վո՞ր շրջապատից, մթնոլորտից էր դուրս յեկել նա։

Նրա հայրը, Սպանդար Սպանդարյանը, իրավաբանության դոկտոր, հայ պահպանողականության ականավոր ներկայացուցիչներից մեկն էր, շրջապատված իր նման մտածող, իր նման դատող համախոհներով, վորոնց մեջ ու վորոնց հետ շարունակ շփվում էր Սուրենը իր մանկությունից։

«Հայրերի և վորդիների» հակադրության լավագույն որինակը մենք տեսնում ենք Սպանդարյանների ընտանիքում, ուր նացիոնալիստ ու կղերական-պահպանողական հոր հանդեպ կանգնում է հեղափոխական ու պրոլետարիատի ազատագրմանը իրան նվիրող վորդին։ Սպանդարը, հայրը Սուրեն վորդու հակոտնյան էր և, յեթե կուզեք, պատմության ցայտուն որինակներից մեկը։ Սպանդարը 70-ական թվականներն էր ներկայացնում, Սուրենը՝ 900-ական, յերբ ամբողջ Ռուսաստանում ծայր էր տվել պրոլետարական շարժումը։

Հետաքրքիր դիտողություններ է անում ընկեր Ռուբեն Դաշտոյանը իր «Սուրեն Սպանդարյանը Բագվում» հոդվածում, յերբ խոսում է հոր ու վորդու, Սպանդար Սպանդարյանի ու Սուրենի փոխհարաբերությունների մասին ու բերում է մի միջադեպ այդ հարաբերություններից։

«1910 թե 1911 թվին նա յերբորդ անգամ բանտարկվեց Բագվում։ Վոստիկանատնից բանտ գնալիս վոստիկանի ուղեկցությամբ մտավ Մոլոկանսկայա փողոցի վրա գտնվող «Արկադիա» ճաշարանը, վոր դեմոկրատիկ ճաշարաններից էր, մեզանից շատերը այնտեղ էին ճաշում։ Սուրենը դիտամբ էր ընտրել այդ ճաշարանը, վորպեսզի

կարողանա տեսնվել ընկերներից վորևե մեկի հետ։ Այնտեղ էինք յես և 26 կոմիսսարների հետ գնդակահարված Թադևոս Ամիրյանը։ Մյուս սեղանի մոտ նստած էր Սուրենի հայրը, Սպանդար Սպանդարյանը, վորի յերգն արդեն յերգված, Բագու յեր յեկել ու զբաղված էր իր չգիտեմ քանի-ամյա գործունեության հոբելյանը կատարելու հոգսերով։

«Սուրենը վոստիկանի հետ միասին նստեց մեր սեղանի մոտ։ Նրանց մի լավ հյուրասիրեցինք։ Սեղանին մոտեցավ նաև Սուրենի հայրը։ Նրանց հարաբերությունները այնքան էլ լավ չէին։ Թեև Սուրենը սիրում էր իր հորը։ Հայրը Սուրենի բանտարկությանը վերաբերվեց բավական սառն ու հանգիստ։ Ամբողջ զրույցի ժամանակ վոչ մի խոսք այդ մասին չասաց։ Նա շարունակ խորհուրդներ էր տալիս առողջությունը պահպանելու մասին։ Սուրենի գնալուց հետո յերկար զրուցեցինք նրա հետ։ Նա ասում էր, վոր Սուրենի գաղափարներին կատարելապես հակառակ է, բայց պարծենում է նրանով, վոր իր վորդին այդպես ընդունակ է անձնվիրաբար պայքարելու իր գաղափարների համար։ Միակ հոգսը նրա առողջությունն էր. «Վախենում եմ նրա առողջության համար։ Նա շատ վատառողջ է»։

Ընկեր Դաշտոյանը իր այս անկեղծ խոսքերով մեր առաջ բացում է մի անագին տրագեդիա, հոգեկան բարդ ապրումների պայքար հոր ու վորդու մեջ, ուր ծնողականն ու վորդիականը տեղի յեն տալիս գաղափարականին, ուր գաղափարն ավելի հզոր է հանդիսանում, քան վորդիական սերը, վորը Դաշտոյանի և ուրիշների վկայությամբ այնքան ուժեղ էր Սուրենի մեջ։ Վորդիական ուժեղ սերը թուլանում է գաղափարի կարծրության դիմաց, և հայը ու վորդի իրար ներկայանում են, յեթե կարելի յե ասել, անհարազատ ոտարների նման։ Նույն հոգեկան դրությունն է ապրում և հայրը, վոր պարծենալով վորդու «իր գա-

գափարների համար պայքարելու անձնվիրությամբ, համեմնայն դեպս հակառակ է նրա գաղափարներին»։

Պատահականություն չէ այս յերևույթը, վոչ էլ արվեստականորեն ստեղծված դրություն։ Իրոք վոր, ինչպես Դաշտոյանն է ասում, «Սուրենը իր կապույտ բլուզով, իսկ հայրը իր հնացած ցիլինդրով տարբեր ժամանակների մարմնացած ներկայացուցիչներն են. մեկը կղերական ազգային հոսանքի, մյուսը միջազգայնականության հեղափոխականության ներկայացուցիչն եր։ Յերկուսն էլ իրար և՛ սիրող, և՛ ատող, իբր հայր ու վորդի և իբր գաղափարական թշնամիներ։ Մի թե տրագեդիա չէ այս դրությունը։

Սուրենի վորդիական սերը արտահայտվում է մի ավելի խոշոր դեպքի առթիվ, վորին «Մարտակոչում» մի յերկար հոդված ունի նվիրած ընկեր Յե. Սուրենը, և վորից ավելորդ չենք համարում դարձյալ մի յերկար պարբերություն բերել՝ ցույց տալու նույն «հայրերի ու վորդիների» միջև յեղած տարբերությունն ու նրանց միջև յեղած հարազատությունը վորդիական ու ծնողական ասպարիզում...

Հասարակական և քաղաքական շրջաններում մի լուր եր տարածվել 1905 թվի հեղափոխությունից հետո։ Զանազան վարիացիաներով ու զանազան հավելվածքով պատմում եյին այն մասին, թե Սպանդար Սպանդարյանը ցարական պահնորդական բաժնի գործակալ է։

Դաշնակցությունը վորդուն վարկաբեկելու նպատակով հոր մասին հայտարարում է, թե «Սպանդար Սպանդարյանը «վոստիկանական մի ցած հոգի պաշտոնյա յե»։

«Սուրեն Սպանդարյանը—ասում է Յե. Սուրենը—շատ մոտ է ընդունում այդ գործն իր սրտին։ Ինչպես նա իր նամակում էլ ասում է, նրա համար շատ ծանր եր հիասթափվել այն հարգանքի ու սիրո մեջ, վոր նա ունկություններից տածել եր դեպի իր հայրը»։

Յեվ նա իր վճռականությամբ, Դաշնակցության հետ բանակցություններ սկսելով կարողանում է ազատվել

հոր անձեռնմխելիությունը, պարզ ասած, ստիպում է Դաշնակցությանը հորը տերորի չենթարկել մինչև գործի պարզումը, և հորն ուղարկում է արտասահման վերականգնելու իր պատիվը։

«Սպանդարը Պարիզում է։ Սուրենը Թիֆլիսից նրան հանգիստ ու դադար չի տալիս, հորը հիշեցնում է շտապել ու շտապեցնել դատավարությունը։ Սուրենին հարկավոր է վորքան կարելի յե սրբել այն ցեխը, վոր հոր վրա նետել են նրա քաղաքական հակառակորդները»։

Հոգեկան այն ապրումները, վոր արտահայտել է Սուրենը իր հորը գրած նամակներում, իրոք վոր տրագիկ են ու բնորոշ, հորը գաղափարապես ոտար, բայց վորդիական սիրով ու հարգանքով մանկությունից հորը կապված Սուրենի համար։

— Ձե վոր յես—գրում է Սուրենը իր հոր մասին—գիտեմ, վոր իմ հայրը, վորին *սովոր եմ հարգել ու սիրել մանկությունից—անմեղ է։*

Հետաքրքիր է այն նամակը, վոր Սուրեն Սպանդարյանը գրում է հայտնի Բուրցևին, հոր դատավարությունը անկանխակալ ու անաչառ ձևով տանելու մասին։ Նամակը չի ուղարկված, բայց բնորոշ է Սուրենի դեպի հայրը տածած հարգանքի տեսակետից, մանավանդ վոր նա հավոզված եր հոր անմեղության մեջ։ Յեվ Սուրենը չի սխալվում։ Սպանդար Սպանդարյանից վերանում է «վոստիկանության գործակալի» անարգ անունը, պարզվելով, վոր նա չէ գործակալը։

Բերենք Սուրենի նամակը Բուրցևին՝ 1911 թվի ապրիլի 26-ին գրած։

«Հարգելի Վլադիմիր Լվովիչ—գրում է Սուրենը Բուրցևին։—Ներեցեք, վոր յես անհանգստացնում եմ ձեզ իմ նամակով և դիմումով։ Բայց ինքներդ կհամաձայնեք, թե այն գործը, վորի համար դիմում եմ ձեզ, չափազանց կարևոր է ինձ համար և շատ ցավագնորեն շոշափում է այն

ամենը, ինչ յես իմ մանկությունից սիրել եմ ու հարգել։ Դա իմ հոր պատիվն է ու բարի անունը, որ այնքան ծանր ու անտեղի, առանց հիմունքի ու ապացույցների այնպես ամբաստանված է ու անարգված նրա քաղաքական թշնամիների կողմից։

«Կարդալով իմ հոր նամակները Պարիզից, յես ամենայն պարզությամբ, ցավոտ պարզությամբ զգում եմ և ապրում նրա բոլոր տանջանքները, նրա բոլոր ցավերը և առավել ևս յես վախում եմ նրա համար։

«Չե՞ որ յես գիտեմ, որ իմ հայրը միանգամայն թե հոգով ու թե մարմնով անմեղ է այն ստորության մեջ, որ գիտակցաբար թե անգիտակցաբար, չար դիտավորությամբ, թե թեթևամտությամբ բարդել են նրա վրա։ Յես ձեզ ճանաչում եմ, Վլադիմիր Լվովիչ, ձեր գործունեությամբ և վոչինչ, բացի հարգանքից, չեմ տածում դեպի ձեզ։ Բայց ձեր նամակը «Голос Москвы»-ի մեջ ինձ խորապես զարմացրեց ու վշտացրեց։ Այդ նամակում չի պահված հարկավոր անաչառությունն ու անդորրությունը, չկա այն օբյեկտիվ տոնը, որ ներշնչում է վստահություն։ Բայց կարևորն այդ չե։ Ձեր նամակի մեջ ինձ զարմացրեց այն պնդումը ձեր կողմից, թե դուք *վոչ մի առնչություն չեք ունեցել* հորս վրա ծանրացած մեղքի հետ, թե դուք *ինքներդ այդ մասին տեղեկացել եք թերթերից*։ Յես իրավունք չունեմ կասկածելու ձեր խոսքերի վրա, բայց իմ մեջ ծագում է մի հարց.—ինչու՞ ուրեմն «մեղադրողները» ամբողջ ժամանակ ոգտվում են ձեր անունից, ձեր հեղինակությունից, ճնշում են գործ դնում հասարակական կարծիքի վրա՝ մատնանշելով ձեզ վրա թե գրավոր, թե բերանացի և թե լրագրության մեջ, որպես մեղադրանքի գլխավոր աղբյուրի վրա։

«Ձեզ չեն հասնում, հարկավ, ձեր հեղինակության շահագործման կամ այդ կարգի և ուղղության տեղեկություններ։ Մինչդեռ սա փաստ է և չափազանց ցավալի փաստ։

Յերբ յես առիթ ունեցա բացատրվել նրանց ներկայացուցիչների հետ, ապա նրանք շարունակ և ամենքի առաջ ժխտում էին իրենց առնչությունը այդ մեղադրանքներին, արտահայտում էին իրենց զարմանքը, նույնիսկ զայրույթը և խոստանում էին ժողովել հարկավոր տեղեկություններ։ «Տեղեկություններ» ստանալուց հետո նրանք ասում էին, որ մեղադրանքի *գլխավոր վկան* դուք եք։ Համաձայնեցեք ինքներդ, հարգելի Վլադիմիր Լվովիչ, որ այս բոլորից հետո կարդալով ձեր նամակը, որտեղ դուք կատեգորիկ կերպով ժխտում եք ձեր առնչությունը հորս «մեղադրականին», յես միանգամայն տարակուսանքի մեջ ընկա։ Մանավանդ որ ձեր նամակը «Голос Москвы»-ի մեջ գրված է կտրուկ պոլեմիկական տոնով։

«Յես ակամա ինձ հարց տվի.—ինչու՞ նամակի հեղինակը չի հայտնում իր վրդովմունքը այն մարդկանց դեմ, որոնք առանց հիմունքի շահագործում են նրա անունը այս ծանր ու պատասխանատու գործում։ Յեվ միակ բացատրությունը յես գտա նրա մեջ, որ ձեզ մոլորեցրել են նրանք, որոնց ձեռնտու յեր և անհրաժեշտ այդ իրենց նպատակների համար»։

Նամակի կտրուկ ու շեշտակի տոնը ապացույց է Սուրենի համոզման, որ իր կղերամիտ հայրը չի կարող ցարական գործակալի վատթար դերը ստանձնել, ու ինչպես ասացինք—չի սխալվում։ Սպանդար Սպանդարյանը քաղաքականապես արդարանում է։

Սուրենին ընութագրելիս, նրան ու հորը ճանաչողները, մանկության հասակից նրանց ընտանիքին մոտ յեղողները որոշ նմանություն են գտնում հոր և որդու ընավորությունների մեջ։ Սուրենի հետ գործող ընկերները գիտեն, թե որ աստիճանի գաղափարական կայունություն ուներ նա, որպիսի մոլեռանդ հեղափոխական եր ու անձնուրաց գործիչ։ Յեվ նրա այդ գիծը, ինչպես ասում է հայտնի վիպագիր Նար-Դոսը, *ժառանգական եր*.

«Սուրենը բացի բնական ուշիմությունից և աչքաբացությունից, հորից ժառանգել եր և նրա անզիջողականությունը հակառակորդի դեմ, իր հայացքներին հաստատուն մնալը, հաստատորեն դիմումն իր նպատակներին, հասարակական ջիղը, խիզախ, բողոքող, ըմբոստ վոգին»։

Թե վորքան Սպանդար Սպանդարյանին հատուկ եյին այդ գծերը, մենք չգիտենք, բայց վոր Նար-Դոսի տված բնորոշումները Սուրենին ճիշտ են, դա անկասկած է։ Նրա այդ հատկություններին մենք կդառնանք հետագայում, սակայն առայժմ կասենք, վոր Սուրենը քաղաքական ասպարեզ գալով վառվեց ջահի նման ու վառված մարեց հեռու հյուսիսում, Սիբիրի տունդրաներում հանուն իր աշխարհայացքի, հանուն բանվոր դասակարգի։

II. ՍՈՒՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Սուրենի մահվան առթիվ Ստեփան Շահումյանն իր գրված հոդվածում հանգուցյալ ընկերոջը այս կերպ է բնորոշում.

«Սուրենը պատկանում եր հայ ծագում ունեցող այն նոր գաղափարական յերիտասարդության, վոր կտրել է իր բոլոր գաղափարական կապերը հայ ազգային ինտելիգենցիայի հետ, վորը այսոր հայտարարում է, թե նա վոչինչ չունի ժառանգած հայ ինտելիգենցիայի նախկին սերունդներից և վոչինչ չունի սովորելու նրանցից։ Սուրենը Ռուսաստանի նոր համապետական կյանքի, ավելի հեռու, միջազգային կյանքի միջավայրի ծնունդ է։ Նրա ուսուցիչները չեն յեղել ու չեյին կարող լինել Ստ. Նազարյանը, Արծրունին, Ռաֆֆին, Քրիստափոր Մաքայեյանը։ Նրա հոգևոր հայրերն ու ուսուցիչները յեղել են Չերնիշևսկին, Բելինսկին, Պլեխանովը և Մարքսն ու Ենգելսը։ Այս պատճառով ել նրան տարորինակ կլիներ «հայ ինտելիգենտ» անունը տալ միայն նրա համար, վոր ծնվել եր հայ ընտանիքում»։

«Ազգային» հրապարակախոսական, ազգային գրականությամբ հղփացած իր հայրական տունն ու շրջապատը նույնքան ոտար եյին Սուրենին, վորքան նա այդ շրջաններին։

Այն խտացած ազգայնական մթնոլորտը, վոր ստեղծվել եր 90-ական և 900-ական թվականների սկզբներին, անկարող յեղավ իր ցանցերի մեջ ձգել մի նոր շերտ հայ ինտելիգենցիայի։ Այդ նոսր, հաստատ ու դերվիշության աստիճանի հասած ժոլեռանդ խմբակն եր, վոր անասելի ներքին ու արտաքին հալածանքների յենթակա, «դավաճանի» անունը ճակատին, մեկուսանալով ազգայնական խմորից, պարզեց դասակարգային կռվի դրոշը և գնաց պայքարելու աշխատավորության մեջ, հանուն աշխատանքի, հանուն պրոլետարիատի դասակարգային կռվի։

Այդ խմբակիցն եր և Սուրենը 1905 թվից։

Սուրենի անդրկովկասյան գործունեությունը սկսվում է 1905 թվականից։ Նա նույն թվի սկզբներին մեկնելով Գերմանիա՝ Հայդելբերգ ու Մյունխեն, ապրելով գերմանական սոցիալ-դեմոկրատիայի հաղթանակի միջավայրը, գալիս է Կովկաս, Թիֆլիս ու դառնալով տեղական հայ աչքի ընկնող մարքսիստներից մեկը, սկզբից իրեն վրա դարձնում է ընկերների ուշադրությունը։

Թիֆլիսի հայ ընկերների նախաձեռնությամբ հրատարակվող «Կայծ» թերթի խմբագրության անդամ ընտրվելով, սկսում է իր պուբլիցիստական գործունեությունը, վորին կից տանում եր նաև կուսակցական աշխատանքներ պրոպագանդայի և ագիտացիայի ասպարիզում։

1906 թվականը, ցարական մանիֆեստից հետո, մեգ ժոտ, Անդրկովկասում բացել եր բոլոր կուսակցությունների բերանը, և յուրաքանչյուրը նրանցից աշխատում եր մասսաներին իր կողմը գրավել։ Հաճախ տեղի եյին ունենում միտինգներ, վիճաբանություններ, դիսկուսսիաներ տարբեր կուսակցությունների միջև։ Մեր ախոյանները, հարկավ, հայ իրականության մեջ հանդիսանալու եյին գլխավորա-

պես դաշնակցականներն իրենց «քույր» սոցիալիստ-հեղափոխականների կամ ես-երների կուսակցության հետ, յերբեմն ել մի ջուխտ ու կենտ «սպեցիֆիկների» հետ, վորոնք նույնպես հավակնություն ունեին մասսաներ գրավելու, ել չենք խոսում մենշևիկների ու մյուս բուրժուական ու մանր-բուրժուական կուսակցությունների մասին, վորոնք անձրևից հետո բուսած սունկերի նման դեպի իրենց եյին ուզում գրավել բանվորական մասսաներին։ Ցեվ ահա Սուրենը մեկն եր նրանցից, վորոնք անխնա մտրակում, խայթում ու յերևան եյին հանում այդ կուսակցությունների հակապրոլետարական բնույթը։ Սուրենը իր խայթող, սուր սլաքներով մահացու հարված եր հասցնում հակառակորդներին բոլոր հավաքույթներում։ Թիֆլիսի «լայն», այլ կերպ ասած՝ լիբերալ շրջանները նրան ճանաչեցին Թիֆլիսի քաղաքային դումայում նրա առաջին յելույթից հետո, յերբ նա իր սուր դիտողություններով ու փաստալի հիմնավորումներով գրավել եր Թիֆլիսի ձայնավորների ուշադրությունը։

Նա 1905—6 թվականներին Թիֆլիսում հրատարակվող նախ «Կայծ», ապա «Նոր Խոսք» որաթերթերում իր հակիրճ, ամփոփ ու բովանդակալից հոդվածներով եր ցույց տալիս իր մարքսիստական ընբռնողությունը և հրապարակախոսական տաղանդը։ Նա իր սուր գրչով, կատաղի լրագրական ու բերանացի պայքարով քիչ չի «ջղայնացրել» դաշնակցականներին ու բայշևիկյան կուսակցության դեմ յելնողներին ու բոլորին տվել ե արժանի ու լուրջ պատասխան։

1906 թվականին եր, վոր Ալլահվերդու պղնձահանքերում հանքատեր «Անոնիմ» ընկերության, բայց փաստորեն ֆրանսիական «Վերն և կոմպանի» բանկի և տեղական բանվորները մի շարք պահանջներ առաջադրելով, դիմում են գործադուլի։ Ֆրանսիական «մրսյոների» համար բոլոր

բանվորները «անարխիստներ» են ու նրանց առաջարկներն ել՝ «անարխիստական»։

Նրանց, այդ «Վերն և կոմպ.» բանկի բաժնետերերին «դիվիդանի» պակասելը շատ եր ջղայնացնում, ու Ալլահվերդու հանքերի դիրեկտորը վոտն ու ձեռ եր ընկել գործադուլը դադարեցնելու համար։

Ցեվ մեր կազմակերպությունը գտնելով Սուրենին ամենից հարմարը բանակցություններ վարելու համար, ուղարկում ե նրան Ալլահվերդի գործը հարթելու և բանվորական պահանջները բավարարել տալու նպատակով։ Սուրենը վրա լե հասնում գործադուլի ամենասուր, ինչպես ասում են, «տուրուդմփոցի» հասնող մոմենտին ու ղեկավարելով գործադուլը, կարողանում ե ֆրանսիացիների ներկայացուցիչներից պոկել մի շարք զիջումներ հանքերում աշխատող պարսիկ ու հայ 6000 բանվորների ոգտին։

Սուրենի առաջին գործնական քայլն եր սա մեր իրականության մեջ, յերբ դեռևս անգիտակից բանվորների շրջան մտնելով, կարողանում ե նրանց մեջ վստահություն գտնել ու նրանց անունից հանքատերերի հետ բանակցություններ սկսել ու հաջողությամբ վերջացնել։

Այս փոքրիկ միջադեպը մեջ բերելով, ուզում ենք շեշտած լինել, վոր արդի Հայաստանի սահմաններում անգամ, ինչպես սիրում են ասել շատերը, Սուրենը հեղափոխական մի լուսա ունի ձգած բանվորական շարժման պատմության մեջ։

Ցարական ռեակցիան արդեն ծայր տալով, իր հարվածներից անմասն չթողեց մեր մամուլին։ «Կայծը» փակվեց, լույս տեսավ «Նոր Խոսքը», վորը նույնպես «չբացված թառամեց»։ Մի խումբ ընկերներ տեղափոխվում են Բաքու, նախ ցարական բաշիբոզուկներից խուսափելու և ապա Բաքվի բանվորական շրջաններում աշխատելու։

Ստ. Շահումյանի, Կասյանի և մի շարք ընկերների

հետ Բաքու չե տեղափոխվում և Սուրենը, ուր սկսում է հրատարակվել «Որեր» որաթերթը, վորը նույն վիճակին յենթարկվելով, ինչվոր Թիֆլիսի «Կայծն» ու «Նոր Խոսքը», ստիպում է ընկերներին գործելու արդեն կենդանի խոսքի միջոցով։

Առաջին Պետական Դուման արդեն ցրված եր, ռեակցիան ուժեղանում եր, իսկ բայշևիկները, վոր բոյկոտի եյին յենթարկել առաջին Պետական Դուման, գտնում եյին, վոր պետք է փոխել կուրսը, մասնակցել յերկրորդ Դումայի ընտրություններին։ Պետական Դուման կարող եր վորոշ չափով ամբիոն հանդիսանալ հեղափոխական տրամադրությունները վառ պահելու, կառավարության ապիկարությունը մերկացնելու տեսակետից։

Յեվ Սուրենը Բաքվի մյուս ընկերների հետ խոշոր ու աչքի ընկնող պայքար է մղում մենշևիկների ու դաշնակների դեմ Պետական Դումայի շուրջը։

Դուման Դումա, ցարական «պարլամենտարիզմը» իր հերթին, բայց նրա եյությունից բղխող ռեակցիան, հեղափոխական մարտիկներին հալածելը, բանտարկելը, տաժանակիր աշխատանքի յենթարկելն ու կախաղանները մյուս կողմից սկսեցին իրենց «հաղթական յերթը»։

1907 8 թվականները Բաքվի պրոլետարիատին տվել եյին մի շարք աչքի ընկնող պրակտիկ ընկերներ, վորոնց մեջ եր և Սուրեն Սպանդարյանը։ Գրիչը կենդանի խոսքի փոխող Սուրենը իր պրոֆեսիոնալ հեղափոխական կյանքով, մյուս կուսակցությունների դեմ մղած պայքարով Բաքվում դառնում է բանվորության սիրելին ու ամենաժողովրդական ագիտատորը Նավթաշխարհում։

Պոլիցիական պայմանները, սակայն, ստիպում են նրան աստանդական կյանք վարել ու հաճախ տեղափոխվել Բաքվից Թիֆլիս, Թիֆլիսից Բաքու։

1909 թվին, յերբ Բաքվի բանտից իրը թոքախտավոր ազատվում է, ու, առանց մի կոպեկի գրպանում, գալիս

է Թիֆլիս ընտանիքով ծանրաբեռնված, աշխատում է մի գործ գտնել ընտանիքը կերակրելու։ Յեվ այդ նեղ վիճակում յեղած միջոցին եր, վոր նրան առաջարկում են խմբագրել «Կապեյկա» ռուսերեն թերթը։

Փոքրիկ, անգույն թերթը կարճ ժամանակում դառնում է «պատիկ ու ճատիկ», բոլորի ուշադրության առարկա մի «որգան»։

Սուրենի պուբլիցիստական գործունեության մասին հիշող ու գրող ընկերները անխտիր գործ են ածում նրա հոդվածները բնորոշելիս «կծու» խոսքը։ Յեվ իսկապես վոր, Սուրենը հիշած փոքրիկ թերթիկի մեջ իր կծու հոդվածներով այնպես եր խայթում արդեն ռեակցիայի թագավորության որերին յերես առած բուրժուազիային, վոր նրանք արդեն խոսում եյին լրագրի «անպարկեշտ» լեզվի մասին։

Հիշում եմ, թե ինչպես, ինչ հումորով Սուրենը հետևում եր այն ժամանակվա քաղաքագլուխ Խատիսյանին ու նրա «քաղաքականությանը»։

Խատիսյանը, վոր կարմիրների հետ կարմիր եր ու հաճախ Պլեխանովից բերած ցիտատներով եր ուզում շլացնել ունկնդիրներին, ռեակցիայի որերին, «ժոռանալով» Պլեխանովին, սկսել եր խոսել Միլյուկովի, նույնիսկ Ստոլիպինի ու ռուսական ռեակցիայի մյուս հանրածանոթ «հանճարների» անունից։ Ահա Խատիսովի քաղաքական ֆլյուգերացիան եր, վոր ցույց եր տալիս Սուրենը և ծաղրում նրան։

Յեթե հեղափոխության մեղրամսին հեղափոխության կպչուն տարրերը հետզհետե հեռանում եյին, փախչում կռվողների շարքերից, ապա պարզ եր, վոր «ապոլիտիկ» տարրերը, Թիֆլիսի Սոլոլակ թաղի «գործիչները», մանավանդ Խատիսովը պետք է շուտ տար իր ղեկը Պլեխանովից դեպի Ստոլիպին։

Բայց այդ փոքրիկ գործունեությունը չեր կարող

59962.66
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Արմ.ССР
Ա. ԱՄ. Ա. Մյասնիկյան
անվան
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

բավարարել Սուրենին, և այս կողմից նա արդեն այդ փոքրիկ թերթին աշխատակցելով անգամ իր վրա չէր գրավել ցարական ցերբերների ուշադրությունը։ Պետք եր խուսափել նրանցից, պետք եր հեռանալ Թիֆլիսից։

Բագվում նա նորից մտնում է բանվորական խավերը իր սիրած կազմակերպչական գործը շարունակելու։ Ցեվ այնտեղ նորից բանտարկվելով, ազատվում է ու կրկին գալիս է Թիֆլիս։ Բագուն ու Թիֆլիսը նրա գործունեության գլխավոր ասպարեզը լինելով, միաժամանակ նրա «ոթևաններն» եյին բանտարկվելու միջոցին։

Սուրենի համար տեղը, հանգամանքները նշանակություն չունեյին։ Նրան հետաքրքրում եր հեղափոխական գործը, իսկական, գործին նվիրված հեղափոխականը։ Եթե նա Բագվում կազմակերպում եր հարյուրավոր բանվոր, իսկ Թիֆլիսում մի և միքանի տասնյակ—նրա համար նույնն եր։ Նրան հետաքրքրում եր վոչ թե քանակը, այլ վորակը։ Ցեվ այն բոլոր բանվորները, վորոնք գործ են ունեցել նրա հետ, համարվում են նրա աշակերտներ, բոլորն ել վկայում են նրա աշխուժությունը, նրա ուրիշներին տված վոգևորող շունչն ու բանվորի հոգին հասկանալու կարողությունը։

Ահա թե ինչու 1912 թվին, յերբ շատ շատերը լքված, հիասթափված հեղափոխությունից, այլ ասպարեզներում եյին ուզում լցնել իրենց դատարկ հոգիները, Բագվի պրոլետարիատը Սուրեն Սպանդարյանին է ուղարկում Պրագա քաղաք, այնտեղ կայանալիք կուսակցական համագումարին մասնակցելու համար։

Ցարական միապետությունը, հետամուտ իր անհաշտ թշնամուն, նախորոք ունենալով նրա հեղափոխականության վորակն ու բնութագիրը, կարողանում է վերջը նրան ձերբակալել Թիֆլիսում մի շարք ընկերների հետ, վորոնց մեջ Ստասովան, Վերա Շվեյցերը և ուրիշները։ Ցարական

դատարանը վորոշում է աքսորել Թիֆլիսից, 20 ամիս բանտում պահելուց հետո։

Վորքան կարճ ժամանակ, 1905—12, բայց վորպիսի բեղմնավոր աշխատանք է տարել Սուրենը մեր իրականության մեջ, վորպիսի յեռանդ ու կյանք արժեցող, սրտամաշ, բայց արդյունավետ գործունեություն է ունեցել մեր կուսակցության շինարարության մեջ—դրա լավագույն հատուցումը մենք գտնում ենք նրանում, վոր վերոհիշյալ Պրագա քաղաքում բայշևիկյան կուսակցության համագումարը նրան ընտրում է Կենտրոնական Կոմիտեյի անդամ։ Դրանից շատ չանցած, բանտարկվում է ու աքսորվում հեռավոր Սիբիր։

Այնուհետև սկսվում է նրա տաղտուկ, հոգեմաշ կյանքը աքսորում, վոր վերակենդանանում եր իմպերիալիստական պատերազմի որերին, յերբ Սուրենը սկզբից ևեթ բռնում է լենինյան, այլ կերպ ասած՝ «պարտվողական գիծը», այսինքն՝ գտնում, վոր Ռուսաստանի հեղափոխությունը կհաղթանակե ցարական Ռուսաստանի պարտության պայմանով։ Այստեղ պատմենք մի բնորոշ դեպքի մասին, վոր պատահել է 1911 թ.։ Ծանր նյութական դրությունը Սուրենին ստիպում է գործ փնտռել, ու կարդալով Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի ուսուցիչներ հրավիրելու հայտարարությունը, Սուրենը շտապում է իրեն ծառայությունը հանձնարարել թեմական դպրոցի վարչության։

Նա իր կյանքում առաջին անգամ պաշտոնի համար ուղղած դիմումի մերժումն է ստանում դպրոցի այն ժամանակվա տեսուչ Յե. Շահազիզից։ Հետաքրքիր եր մերժման պատճառը։ Տեսուչ Յե. Շահազիզը բացատրում է, վոր «ուսուցիչների ընտրությունը կայացել է», և «ըստ կանոնադրության, ինչպես հայտարարված եր, «ինկատի առնվեցան միայն իրավատեր անձանց խնդիրները»։

Ասել է՝ հեղափոխականը այն ժամանակվա պայմաններում վոչ միայն հալածվում եր ու հալածական եր միապետության կողմից, այլև այն շրջաններից, վորոնց ձեռքին եր հասարակական-դպրոցական ասպարեզը։

Սուրենի համար սա նորություն չեր ու վոչ էլ անսպասելի մի հայտնություն։ Ու յեթե կուզեք, Նոր-Նախիջևանի դպրոցական ճահիճը չեր էլ սազում Սուրենի նման կրակ յերիտասարդին, վորը պիտի ստիպված լիներ դպրոցական շրջանակներով սահմանափակել իրեն, դառնալ «բարեհույս» քաղաքացի, կորցներ գույնը և հեղափոխական թափը։

Այդ կողմից շնորհակալության ե արժանի Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի վարչությունը, հանձին տեսուչ Յե. Շահազիզի, վոր իր մերժումով Սուրենին ստիպում է գնալ ու գործել իր խառնվածքին համապատասխան, իր տարերքը համարվող բանվորական միջավայրում— Բագու։

III. ՍՈՒՐԵՆԸ ԱՔՍՈՐՈՒՄ

Թիֆլիսի բանտում քսան ամսից ավելի ապրող Սուրենին քշում են Սիբիր, Նովո-Նիկոլայևսկ քաղաքը։ Բայց ռեակցիան չի բավարարվում Սուրենին կենդանի կյանքից կտրելով, նա ուզում է ձեռքն ընկած թշնամուն ճզմել։ Յեվ Նովո-Նիկոլայևսկ քաղաքի կյանքը «ճոխություն» համարելով, Սուրենի ըմբոստ քայլերը ճնշելու նպատակով, նրա կարդացած մի դասախոսության պատճառով նրան «տեղափոխում են» Տուրուխանկա։

Տուրուխանկան Սիբիրի Յենիսեյսկ նահանգի մի ընդարձակ, 20 հազար քառակուսի վերստ տարածություն բռնած, նոսր ազգաբնակություն մի յերկիր է։ Ցարական բռնակալությունը վաղուց հետե իր քաղաքական թշնամիների հետ «հաշվի նստելիս» նրանց աքսորել է այդ, ինչպես հնումն եյին ասում, «աստծուց ու մարդուց մոռացած» յերկիրը։

Այդ յերկիրն աքսորելով եր, վոր ցարական կառավարությունը իր քաղաքական թշնամիներին յենթարկում եր աստիճանական հալման, մահվան։ Յեվ այդ ցուրտ, մքլած,

Սուրենը աքսորում.

խոնավ ու անապատ վայրերում ընկել են շատ ու շատ անվանի հեղափոխականներ, ինչպես և շատերը ազատվելով այդ յերկիր-գերեզմանից, գերեզմանափորի դեր են ստանձնել ցարական միապետության հանդեպ։

Սուրենը Տուրուխանկա, այդ կենդանի գերեզմանոցն ընկնելով չի հուսահատվում։ Աքսորում նրա բախտակից ու կուսակից ընկերները ամենալավ գույներով են նկարագրում Սուրենին, իբր մի մարդու, որին չի կարողացել ընկճել վոչ ցարական բանտը և վոչ էլ Տուրուխանկայի աքսորը։

Ֆանատիկոսության ասիճանի հասած հեղափոխականը ընկնելով աքսոր—Տուրուխանկա, չի տարվում իր բախտակից, բայց տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների հետ «աքսորականի վիճակ» վայելելու, համերաշխ ապրելու տրամադրությամբ։ Ու հենց առաջին որերից նկատելով բախտակցական «համերաշխ» մթնոլորտը, սկսում է հեգնել.

— Վորպիսի անդորը, վորպիսի ներդաշնակություն, ամեն խնդրում համաձայն են իրար հետ, թե բայլշեվիկները, թե մենշևիկները, թե ես-երները. սրանից էլ լավ բան։

Այդ տարիներում հուսահատված ու աքսորում լքված հոգիներից վոմանք վոչ մի տեղից հուսո նշույլ չնշմարելով, կամ ընկնում էին սկզբունքային անտարբերության աշխարհը, կամ, վոր ավելի վատ եր—ինքնասպանության ելին դիմում։

Այդպիսիներից չեր Սուրենը։

Նրա համար աքսորը մի ակամա դադար եր բուռն հեղափոխական կյանքի։ Աքսորում անգամ նա ուզում է «ինքնորոշվել» և վոչ թե ընկնել իր բախտակիցներից շատերի «անտարբերության» մթնոլորտը։

— Բավական է, ինչ թմրել ենք. ինչ եք տղաթևել, վեր կացեք, պատրաստվեցեք, գաղափարախոսական, սկզբունքային հիմքերը մի լավ գնահատեցեք, ինչ եք անելու, գալիք կռվում ինչ դիրք եք բռնելու։ Չե՞ վոր հեղափոխությունը յոթը սարի յետևում չի։

Ասում եր Սուրենը և ենչած, թմրած դրությունից զգաստացնում աքսորական ընկերներին։

— Մի՞թե չգիտեք, վոր աքսորի ձայնին ձայնակից է պրոլետարիատը։ Այստեղ պրոլետարիատը պատրաստվում է վոտքի կանգնելու. բացի «Պրավդայից» նա ուրիշ դեկավար չունի—յելեք, ուղեցույց հանդիսացեք պրոլետարիատին։

Այսպիսի խոսքերով եր, վոր Սուրենը սթափեցնելով ընկերներին, նրանց մեջ կենդանության շունչ եր մտցնում ու իր ունեցած տեղեկությունները հաղորդում նրանց։

Սուրեն և Ստալին.

Իսկ նա, հեռավոր Սիբիրում անգամ, գիտեր ու ծանոթ եր այն բոլոր անցուդարձին, այն պայքարին, վոր տեղի ուներ բայլշևիկների ու մենշևիկների կամ, ինչպես այն ժամանակ Լենինը մկրտել եր նրանց, «լիկվիդատորների» մեջ։ Սուրենը մենշևիկներին այլ կերպ չեր անվա-

նում, բացի «լեգալ գործերի վարպետներ» հեղնական մականունով։

Աքսորում, հեռավոր Տուրուխանկայում էին այն ժամանակներում Յակով Միխայլովիչ Սվերդլովը, Ռուսաստանի կենտրոնական գործադիր կոմիտեյի առաջին նախագահը և Զուդաշվիլի-Ստալինը, վոր մի քանի անգամ փախչելու անաջող փորձերից հետո փակվել եր հյուսիսային բևեռային գոտուց քսան վերստ հյուսիս գտնվող Կուրեյկա խուլ գյուղում։

Սպանդարյանի, Ստալինի, Սվերդլովի Տուրուխանկա գալովը թարմանում է Սուրենի աքսորավայրի կյանքը և նոր հոսանք է մտնում աքսորականների միապաղաղ ու զորշ կյանքում։

Սուրեն Սպանդարյանի մտերիմներից Վերա Շվեյցերը նկարագրում է Սուրենի աքսորավայրում վարած կյանքը, ուր նա Սուրենին բնորոշելով իբր մի տաք ու կրակոտ հեղափոխականի, ցույց է տալիս, թե ինչպես նրա գալով Տուրուխանկան կենդանացավ։

Աքսորավայրում սկսվեցին տաք վիճաբանություններ— ասել է՝ Սուրենը վերջ տվեց անտարբերության ու ապատիկ դրության։ Որվա հարցը դեպի պատերազմը բռնելիք դիրքն եր։

Իսկ իմպերիալիստական պատերազմը սկզբունքային այն փորձաքարն եր, վորին դիպչելով շատ ճակատներ ջարդվեցին, շատերը մոլոր ու մոլար՝ անկարող յեղան իրենց դիրքը պարզել դեպի այդ միջազգային «դժվարին մոմենտը»։

Գաղտնի գործունեության պրոցեսում, կենտրոնական մարմիններից դիրեկտիվներ չստացող կազմակերպությունների ու անհատ ընկերների համար շատ եր դժվար նախորոք վորոշել իրենց դիրքը դեպի պատերազմը։ Շատ քչերին եր հաջողվում, կամ շատ քչերը կարող եին բայլ-

շևիկյան հոտառությամբ մոտենալ հարցին ու տալ այս ու այն լուծումը։

Պատերազմին թեր թե դեմ ե մեր կուսակցությունը։ Ահա մի հարց, վորին դժվար եր պատասխանել։ Մանավանդ վոր մարքսիզմի «պատրիարխ» Գեդը և նրա հետ ել շատ շատերը թեքվել եին դեպի «հայրենիքի պաշտպանության» կողմը, և նախկին դասակարգային կռվի մասին խոսելու փոխարեն լսվում ու հնչվում եին «հայրենիք», «ազգային շահեր» և այլն տարորինակ խոսքեր այնպիսի լիդերների բերանից, ինչպիսին մենք այն ժամանակ համարում եինք Կաուցկուն և մյուսներին։

Աքսորավայրում նույնպես սկսվել եին վիճաբանություններ պատերազմի մասին։ Սուրենը մի շարք զեկուցումներով ու զրույցներով ապացուցում եր, թե մեր հիմնական գիծը պատերազմի մասին կարող ե և պետք ե լինի Ռուսաստանի պարտությունը, թե Ռուսաստանի պարտությամբ միայն կարող ե հեղափոխությունը թե արագանալ ու թե աջողությամբ պսակվել...

— Հիշեցեք 1812 թիվը և «հայրենական» պատերազմը, Մոսկվայի գրավումը և ապա ռուսական հեղափոխության ծնունդը, դեկաբրիստների առաջանալը։

— Վերցրեք Սևաստոպոլի խայտառակ պարտությունը և ապա 1861 թվի ճորտերի ազատագրումը։

— Լուի Բոնապարտի Սեդանում կրած հարվածները և Պարիզի Կոմմունան, հանրապետության վերականգնումը Ֆրանսիայում.—պնդում եին ընկերները և գտնում Ռուսաստանի պարտության անհրաժեշտությունը։

Իսկ Սուրենը սկզբից ևեթ բռնելով «պարտվողական» գիծ, ուժեղ պայքար ե մղում մենշևիկների ու սոցիալիստ-հեղափոխականների հետ, ցույց տալով, ապացուցելով նրանց սոցիալ-դավաճանական քաղաքականությունը պատերազմի հարցում։

Ու յերբ Սուրենը ստանում է Լենինի հայտնի յոթը թեզիսները պատերազմի մասին, վորը նա առաջարկել եր Ցիմմերվալդում, նրա ուրախությանը չափ չկար։ Նա հրրճվում եր—ասում է Վերա Շվեյցերը,—վոր իր մտքերը զուգադիպեցին Լենինի թեզիսներին։ Ամեն մի անձնվեր բայլշևիկի համար չկար ավելի մեծ պարգև, քան ստուգել իր վարքագիծը Լենինի տեսակետների հիման վրա։

Հեռու Տուրուխանկայում Լենինի աշակերտն ու նրա մտքերով դաստիարակված Սուրեն Սպանդարյանը չեր կարող այլ կարծիք ունենալ պատերազմի մասին, քան ինքը Լենինը։

Սուրենը աքսորում ստանում է կողմնակիցների մի ստվար մեծամասնություն, և միապաղաղ աքսորավայրը բաժանվում է ըստ հայացքների։

Սուրենը համառուսական կյանքի հրատապ խնդիրները դարձնելով իր աքսորավայրում անցնող կյանքը, իր խառնվածքին հատուկ թափով հետաքրքրվում եր և Անդրկովկասի կյանքի անցուդարձով, մասնավորապես հայ իրականության մեջ ծայր տված «կամավորական շարժումով»։

Նա Սիբիրից գրած իր մի շարք նամակներում բնորոշում է ժամանակի «ազգային մտքի» տիրակալներին, մասնավորապես դաշնակցականներին։

Խոսելով Վարանդյանների, Ահարոնյանների, զանազան «ազգային ջոջերի» խաղացած խայտառակ դերի մասին, նա իմիջի այլոց ասում է. «Մի՞թե ժամանակ չէ, մի՞թե մարդիկ չկան, վոր տան այդ վոճրագործների վզին և այն չնչինը, վոր մնացել է դեռ, ազատեն, պահպանեն։ Սիրտս այրվում է, չգիտեմ քանի անգամ սկսել եմ գրել, բայց ինչ արած, ասպարեզը, ամամուլը և ուժը, պոլիցիական ուժը նրանց ձեռքին է, նրանց կողմն է։ Ցեռ հենց սկզբից գիտեյի, վոր կատարվելու յե վոզբերգություն, գրել եյի Բաքու, առաջարկելով վորևե քայլ անել այդ ժողովրդասպանների դեմ»...

Մի ուրիշ նամակում հետևյալն է գրում Սուրենը իր հետ աքսորված ընկերներից մեկին. «Զարմանում եմ և վրդովվում այն հսկայական խաբեբայությունների և հիմարությունների առթիվ, վոր կատարվում են այժմ հայ շրջաններում։ Սիրտս կծկվում է և արյունոտվում, յերբ կարդում եմ այն հազարավոր փախստականների մասին, այն խեղճ ու տառապյալ, անլուր տանջվող և արյունոտ ժողովրդի, բռնաբարված կանանց ու մորթոտված յերեխաների մասին։ Ահա հայ ազգային քաղաքականությունը, ահա ժողովրդություն հայցող դաշնակցականների հեղափոխությունը, Տաճկահայաստանի ազատությունը։ Այո՛, «ազատություն», բայց առանց հայերի, այո՛, «ազատություն, վոր դառնում է Պուրիշկևիչների ու Միլյուկովների զավթման։ Խեղճ ժողովուրդ, ել չեմ գրում. պապանձվենք ու պիտի պապանձված մնանք, մեր մեջ տանելով մեր ցավը, ինչպես և մեր տանջվող խեղճ ու անզոր «սուրբ անասուն լուսավորչական ժողովրդի» մրմուռը»։

Այս անկեղծ ու սրտաբուղխ խոսքերը թող կարդան մեր ազգային ապուշները, ըմբռնեն ու գիտակցեն, վոր իրենց դոնքիշոտական խաղերի, վայրենի հիմարությունների միջոցին, յերբ նրանք «ազգ եյին փրկում», հեռավոր Սիբիրում անգամ յեղել են զգոն ու խելացի, խելամիտ մարդիկ, վորոնք առաջուց գուշակել են դաշնակների ու նրանց համախոհների ավանտյուրիստական քայլերի իմաստն ու հետևանքը, բայց անզոր կսկիծով միայն փարատել են իրանց ցավը ու մրմունջը... պապանձվելով, «իրանց մեջ տանելով տանջվող ժողովրդի, խեղճ ու անզոր «սուրբ անասուն լուսավորչական ժողովրդի» մրմուռը»...

Թող մեր «ազգասեր» ու «ազգանվեր» թշվառականները իմանան, վոր ազգասիրական ռոմանտիկ վոգբասանությունների վհուկային խորիմաստության դեմ, նրան ներհակ յեղել են «ազգային դավաճաններ», վորոնք զգու-

շացրել են նրանց, գիտակցելով նրանց անմիտ քայլերի ճակատագրական հետևանքները։

Սուրենը միքանի տարի մնալով աքսորավայրում, լեգենդար ու ինքնավառ ծառի նման վառվեց ու մոխիր դարձավ ցուրտ ու անհամբույր հյուսիսում։ Նրա քաղաքական-հասարակական դավանանքը, վոր մի ժամանակ համարվում եր «աղանդ» ու «հերձված», այսոր համաշխարհային պրոլետարիատի, լավագույն հեղափոխական խավերի հավատո հանգանակն ե, կռվի, պայքարի նշանաբանն ու առորյան, մարդկության ազատագրության լավագույն ու միակ ուղեցույցը։

Սուրենը գործեց ցարական միապետության ծավալով, մոռացության չտալով այն ժողովրդի ցավն ու կարիքը, վորի ծոցից դուրս եր յեկել, բայց վորի հետ չկապվեց ազգայնական շաղախով։

Սուրենի մահվան բոթը կայծակի արագությամբ տարածվեց Անդրկովկասի հեղափոխական ու բանվորական շրջաններում։ 1916 թվին հրատարակվող «Պայքար» թերթը, չնայելով ցենզուրական հրեշավոր պայմաններին, հատուկ համար նվիրեց Սուրենի հիշատակին, գետեղելով մի շարք ընկերների՝ Ս. Շահումյանի, Ա. Ցերզնկյանի, Ա. Մռավյանի, Հ. Հակոբյանի և այլոց գնահատականները Սուրենի գործունեության մասին։

Մի շարք գրություններ, վորոնք բնորոշում եյին Սուրենին իբր ագիտատոր, պրոպագանդիստ, կազմակերպող, բանվորական միջավայրին, բանվորների հոգերանությանը ծանոթ մարդու—անկարող յեղանք գետեղել թերթում։

Հետաքրքիր ե, թե ինչ կարծիքի եյին այն բանվորները, այն պրոլետարները, վորոնց կազմակերպել եր, վորոնց մեջ հեղափոխական գիտակցություն եր մտցրել Սուրենը այն մռայլ տարիներում, յերբ շատերը խուսափում եյին հեղափոխական ասպարեզից, հեղափոխական խոսքից ու գործից։

«Սուրենը կազմակերպելու մեջ ընդունակ եր բառի բուն իմաստով, նրա ներկայությունը մեր մեջ աշխույժ եր ծնում, կյանքը յեռում եր—գրում ե «Կովկասյան» կեղծ անվան տակ ընկ. Ն. Ներսիսյանը Աստրախանից։ «Կյանքը յեռում եր, աշխույժ եր ծնում» այն պատմական պերյոդում—1911 թվին, յերբ ցարական խոլ խավարը սփռել եր իր մահաթույր ռեակցիան ամբողջ Ռուսաստանի վրա, ու Սուրենները գարնան ասուպների նման յերևում եյին այդ կոշմարային իրականության մեջ հավիտենապես մարելու պայմանով։ Նա, բանաստեղծի ասածի նման, այդ մութի մեջ վառվում եր ավելի պայծառ լուսով, արձակելով իր հեղափոխական շիթերը գործարանային բանվորի խավար գիտակցության վրա։

Ու զուր չեր, վոր բանվորները նրան սիրում եյին։

«Սուրենի ամենամեծ ու առանձին առավելությունը կայանում եր նրանում, վոր լիովին հասկանում եր մեր բանվորների հոգեբանությունը, գիտեր մոտիկանալ ու ապա կազմակերպել»—ասում ե նրա հետ աքսորված բանվոր Վ. Խաչատրյանը։

Այս փոքրիկ բնութագրերը յեթե լավ ըմբռնելու լինենք, յեթե պահ մի մեզ յերևակայենք այն տարիներում ու այն միջավայրում, յերբ և ուր գործում եր Սուրենը—հասկանալի կլինի նրանց արժեքը։

Ընկեր Մելիքը—Դեդուշկան—նրա մահվան առթիվ իր գրած ցավակցական-բնութագրական փոքրիկ հոդվածում նույնպես տալիս ե Սուրենի հեղափոխական գործունեության ու դեմքի ուրվագիծը, վոր ընդհանրապես հանդում ե մյուս ընկերների նրա մասին հայտնած կարծիքին։

Մենք այս մի-յերկու տասնյակ յերեսներում տալով Սուրենին բնութագրող մի շարք մոմենտներ ու փաստեր, այնուամենայնիվ գտնում ենք, վոր չենք տվել նրա ամբողջական պատկերը, նրա գործունեության «մանրամասները»։

Մեր այս տողերի թելադրողը այսորվա միջավայրն է, որ ավելի պահանջկոտ է ու գործունեության լիակատար անկեղծություն պահանջող։

Շատերը չըմբռնելով ժամանակի հանգամանքներն ու տիրապետող դրությունը, կարող են «բողոքել», թե ինչով է հայտնի, ի՞նչ է արել ներկա դեպքում Սուրենը, որ այնքան աղմկում ենք նրա շուրջը, ո՞ւր է նրա գրական, պատմական, գիտական, մի խոսքով՝ թողած շոշափելի ժառանգությունը։ Այդպիսին չկա։

Սուրեն Սպանդարյանը տեսական—թեորետիկ խոշոր հատորներ չի թողել, քանի որ նա յեղել է «պրոֆեսիոնալ» պրակտիկ գործող, ակտիվ հեղափոխական, բայց ոչ կաբինետային գիտնական։ Նա ավելի շատ գործի, քան խոսքի մարդ եր, բայց և այնպես, նրան ճանաչող ընկերները գիտեն և հրապարակով ել վկայել են, որ Սուրենը յեղել է այն ականավոր մարքսիստներից մեկը, որոնք իրենց տեսական աշխարհայացքը իրականության մեջ պատվաստելով, անմիջական կյանքի հետ կապելով են արդյունքի հասել։

Հնում, մանավանդ Ռուսաստանի ներսը աշխատելիս, հեղափոխականը ըսկի ժամանակ չուներ գրականությամբ զբաղվելու, և Սուրենը իբր այդպիսին շատ քիչ բան ունի թողած։ Հիշած «Կայծ» ու «Նոր Խոսք» թերթերում, այնուհետև «Կապեյկա» և Բագվի միքանի թերթերում զետեղված հոդվածներից զատ գրական ժառանգություն չունի թողած։

Բայց նա ունի մի այլ ժառանգություն։ Նրա և իր ընկերների անդուլ աշխատանքի արդյունքն է այն հսկայական կառուցվածքը, որ այսոր կոչվում է Համախորհրդային Կոմմունիստական Կուսակցություն, որի ոչ միայն չարքաշ մշակն է յեղել Սուրենը, այլ և ըմբոստ ու հմուտ ղեկավարներից մեկը։

Նա, ինչպես և նրա ընկերները, դասակարգային կռվի դրոշը բարձր բռնած, համամարդկային, միջազգային պրոլետարիատի ազատագրման մեջ գտնելով կյանքի լավագույն իմաստը, ընկան այդ սկզբունքը գործնականորեն կիրառելիս։

Սուրենը, ինչպես և Ստ. Շահումյանը, պատմական այն պլեադաներն են, որոնց չի մոռանալու ոչ միայն հայ, Անդրկովկասի, Խորհրդային Միության, այլ և միջազգային պրոլետարիատը։

Գրական հատորներ չի թողել Սուրենը, բայց թողել է մի լավագույն ավանդ.—նմանել իրեն. կռվել դասակարգորեն, բարձր պահել պրոլետարիատի պայքարի դրոշը, առաջ շարժվել հաղթանակի ձգտումով։

Թող որ նոր ու գալիք սերունդները անցնելով նրա արձանի առաջից, իմանան, որ նա մարմնացումն է կռվի, պայքարի, թող որ նրա թողած ավանդը կատարեն շիտակ ու անթերի, հեղափոխական, հենց Սուրենի ու իր ընկերների արյունով ծնված ու հարթված ուղիներով։ Թող իմանան, ինչպես բանաստեղծն է ասում, նա մեկն եր այն հազարավորներից, որոնք կարմիր շապիկով են ծնվում և ճերմակ սավանի մեջ մեռնում, դաժան, ցրտաշունչ հյուսիսում։

Կարճ եր նրա կյանքը, բայց բուռն և բովանդակալից։

Յեվ նրա կյանքի բովանդակությունն եր հեղափոխությունը, որի սեղանին զոհ գնաց նա 1916 թվին, 34 տարեկան հասակում։

Շարունակենք այն գործը, որի համար նա ապրեց ու մեռավ—ասում եր Ստեփան Շահումյանը Սուրենի մահվան առիթով 1916 թվին։

Բարձր պահենք այն դրոշը, որ ընկավ Սուրենների ու Շահումյանների ձեռքից։ Այդ կլինի ամենալավ հարգանքը մեր նախորդների հիշատակին։

գրբ 254կպ 1/2 գրպ.